

DESCRIPTION OF PRACTICAL EXPERIENCE BASED ON BUDGET ANALYSIS CONDUCTED BY NGO IN THE FRAMEWORK OF EHRA GRANT REALIZATION (CASE-STUDY)

Organization title, country of registration	«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, Հայաստան
Name and surname of the employee / consultant who prepared the case-study	Հմայակ Ավետիսյան – Ծրագրի համակարգող, Անահիտ Հարությունյան – Բյուջետային ադվոկացիայի փորձագետ
Terms of analysis conduction	01.07.2021-31.03.2021
The level of the analyzed budgets (national, local - indicate city or territory)	Ազգային
Target group(-s) (community(-s) for which service budgets have been analyzed	SUS և տրանս* անձինք
Analyzed period	2018-2020

1. Description of the general state of funding for the specified target group(-s) in the analyzed period (list all possible sources of funding):

SUS և տրանս* անձանց շրջանում ՄԻԱՎ-ի նկատմամբ կանխարգելման ծրագրեր իրականացվում են Գլոբալ հիմնադրամի միջոցներով: Հիմնական ստացող մինչև 2019թ. ապրիլ հանդիսանում էր «Առաքելություն Արևելք» կազմակերպությունը, իսկ դրանից հետո արդեն հիմնական ստացող է հանդիսանում ՀՀ Առողջապահության նախարարությունը: Բացի այդ կանխարգելման ծրագրեր են իրականացվել մի քանի մարզերում ևս ՁԻԱՀ-ի դեմ պայքարի էլթոն Ջոնի հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Վերջին երեք տարում Գլոբալ հիմնադրամի կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և ՏԲ ծրագրերի համար ՀՀ Առողջապահության նախարարությանը տրամադրված ընդհանուր, SUS-ների և տրանս* անձանց համար համապարփակ կանխարգելման ծրագրերի գումարները և տոկոսային հարաբերակցությունն ըստ ծարգրային տարիների ներկայացված են ստորև՝

	Ընդհանուր/ԱՄՆ դոլար	SUS-ների համար համապարփակ կանխարգելման ծրագրեր	%	Տրանս* անձանց համար համապարփակ կանխարգելման ծրագրեր	%
2018-2019թ.	2.347.619,00	119.841,00	5,1	1.224,00	0,05
2019-2020թ.	3.485.134,00	277.114,00	7,9	3.912,00	0,11
2020-2021թ.	2.506.947,00	271.676,00	10,8	3.569,00	0,14

2. A list of all partners and consultants involved in the review process, indicating their roles and contributions:

Վերլուծությունները իրականացվել են «Բյուջետային անալիզը՝ որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրային թիմի անդամները, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ այլ աշխատակիցներ, միջազգային փորձագետ, տեղական փորձագետներից կազմված փորձագիտական թիմը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակիցներ, Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի (Նախկին ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն) ներկայիս և նախկին աշխատակիցներ, այլ անկախ փորձագետներ:

Սերգեյ Գաբրիելյան – «Բյուջետային անալիզը՝ որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի ղեկավար

Հմայակ Ավետիսյան - «Բյուջետային անալիզը՝ որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի համակարգող

Արման Սահակյան - «Բյուջետային անալիզը՝ որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի ֆինանսական ղեկավար

Սիրակ Եղիազարյան - «Բյուջետային անալիզը՝ որոշումների կայացման գործընթացում թիրախ խմբերի ներգրավվածության համար» ծրագրի իրավաբան

Շուշան Խևկոյան - «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբան

Անահիտ Հարությունյան – SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի վերլուծության փորձագետ, SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների ֆինանսական բացերը հասցեավորող ճանապարհային ադվոկացիոն քարտեզի մշակման փորձագետ

Ալբերտ Սարգսյան - SUS և տրանս* անձանց տրամադրվող սոցիալական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի վերլուծության փորձագետ

Մարիամ Մուրադյան - SUS և տրանս* անձանց տրամադրվող առողջապահական և սոցիալական ծառայությունների համար բյուջետային ադվոկացիայի միջազգային փորձը ներկայացնող փորձագետ

Հասմիկ Հարությունյան – ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար, տրամադրել է անհրաժեշտ տեղեկատվություն:

3. List of documents under analysis (budgets, laws, regulations, protocols, etc.):

Վերլուծության ընթացքում դիտարկվել են հետևյալ փաստաթղթերը.

- Հայաստանի Հանրապետությունում 2017-221թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիր
- Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի շրջանակում 2019 թվականին իրականացված միջոցառումների հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվետվություն
- ՄԻԱՎ վարակի նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում 2018, տարեկան գեկույց
- Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի առաջարկի փաթեթ, 2018
- ՄԻԱՎ և տուբերկուլոզ ոլորտի անցումային պլան, Հայաստան
- Թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական հարաբերություններ տրամադրող կանանց, տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց և տրանսգենդեր անձանց շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ինտեգրված կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2018
- ՄԻԱՎ-ի և ՁԻԱՅ-ի կանխարգելմանն ուղղված SUS-ներին տրամադրվող մինիմալ ծառայությունների նկարագիր
- ՄԻԱՎ-ի և ՁԻԱՅ-ի կանխարգելմանն ուղղված տրանս* անձանց տրամադրվող մինիմալ ծառայությունների նկարագիր

4. Availability, openness, transparency of the analyzed information (state / municipal budgets, etc.):

Հիմնական տեղեկատվությունը ստացվել է ՀՀ Առողջապահության նախարարության և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արված հարցումների օգնությամբ: ՀՀ Առողջապահության նախարարության կայքէջում թափանցիկ ներկայացված են ծրագրային ծախսերը, սակայն բաց տեղեկատվություն առկա ֆինանսների մասին այդքան էլ հեշտ չի ստանալ և տարանջատել, քանի որ ազգային բյուջեում ներկայացված է ընդհանուր գումար, որից ծրագրային բաշխումները չեն երևում:

5. Other obstacles to budget analysis when conducted by NGO:

Ծրագրային միջոցառումների վերաբերյալ հավաքագրված առկա տեղեկատվությունը օրացուցային տարով է ներկայացված, իսկ ազգային ֆինանսական միջոցների հատկացումները՝ ֆիսկալ տարով, ինչը սահմանափակում էր որոշ

կտրվածքներով վերլուծության համեմատություններ անելը: Մի շարք միջոցառումների կտրվածքով հավաքագրվող տվյալները ագրեգացված չեն, ինչը խոչընդոտ է հանդիսացել դիտարկելու տարբեր միջոցառումների գծով SUS-ների և տրանս* անձանց համար ծախսված ֆինանսական միջոցները, օրինակ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելումը: SUS-ների և տրանս անձանց տրամադրվող կանխարգելման ծրագրերին հատկացված ֆինանսական միջոցները վերաբերյալ տվյալները ստացվել են ընդհանուր թվով՝ առանց առանձին միջոցառումների բացվածքի՝ հաշվի առնելով 2019թ.-ից կիրառվող միավորի արժեքի հաշվարկման սկզբունքը:

6. Which data collection methods worked better, and which didn't:

Վերլուծության ընթացքում իրականացվել է առկա փաստաթղթերի ուսումնասիրություն: Կազմված հարցաշարով հավաքագրվել է տեղեկատվություն ֆինանսական ծախսերի վերաբերյալ համապատասխան պետական գերատեսչություններից և ոչ պետական կառույցներից: Ինչպես նաև իրականացվել է խորացված հարցազրույցներ փորձագետների հետ:

Վերլուծություն իրականացնելու ընտրված մեթոդները արդարացրել են իրենց:

7. Estimated data:

- list of services for the target group selected for analysis,

SUS

Ծառայությունների նվազագույն փաթեթ

- Հավասարը՝ հավասարին խորհրդատվություն՝ ՄԻԱԿ-ի ու ՁԻԱՀ-ի և առկա ծառայությունների վերաբերյալ;
- ՄԻԱԿ վարակի վերաբերյալ նախաթեստային խորհրդատվություն;
- Պահպանակների տրամադրում:

Ծառայությունների ընդլայնված փաթեթ

- ՄԻԱԿ վարակի վերաբերյալ նախա- և հետթեստային խորհրդատվություն;
- ՄԻԱԿ վարակի նկատմամբ հետազոտություն շահառուի ինքնաթեստավորման միջոցով;
- Լուբրիկանտների տրամադրում;
- Կրթատեղեկատվական նյութերի տրամադրում;
- Առավել ռիսկային վարքագիծ դրսևորողների համար Ինֆեկցիան հիվանդությունների ազգային կենտրոնում (ԻՀԱԿ) նախակոնտակտային կանխարգելման (PrEP) և հետկոնտակտային կանխարգելման (PEP) ստացման հնարավորության մասին տեղեկատվության տրամադրում;

- Սեռավարակների նկատմամբ հետազոտություն և բուժում;
- Իրավաբանական անհատական խորհրդատվություն:

SU

Ծառայությունների նվազագույն փաթեթ

- Հավասարը՝ հավասարին խորհրդատվություն՝ ՄԻԱՎ-ի ու ՁԻԱՀ-ի և առկա ծառայությունների վերաբերյալ;
- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախաթեստային խորհրդատվություն;
- Պահպանակների տրամադրում:

Ծառայությունների ընդլայնված փաթեթ

- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախա- և հետթեստային խորհրդատվություն;
- ՄԻԱՎ վարակի նկատմամբ հետազոտություն շահառուի ինքնաթեստավորման միջոցով;
- Լուբրիկանտների տրամադրում;
- Կրթատեղեկատվական կյոթերի տրամադրում;
- Առավել ռիսկային վարքագիծ դրսևորողների համար ԻՀԱԿ-ում նախակոնտակտային կանխարգելման (PrEP) և հետկոնտակտային կանխարգելման (PEP) ստացման հնարավորության մասին տեղեկատվության տրամադրում;
- Սեռավարակների նկատմամբ հետազոտություն և բուժում;
- Իրավաբանական անհատական խորհրդատվություն:
- Ներգատաբանի խորհրդատվություն:

- estimated size of the target group,

2018թ. իրականացվել է խմբերի չափերի գնահատում: SUS-ներ՝ 16100 (արական սեռի մեծահասակ բնակչության 1,52%), SU խմբի ընդհանուր չափը գնահատման արդյունքում կազմել է 150 երկրի մակարդակով:

	2019	2020
MSM	4000	5500
TG	62	80

- the cost of each service

Ուսումնասիրվել է ընդհանուր բյուջեն՝ առանց բաշխումների, քանի որ ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից տրամադրված բյուջեն չի արտացոլել յուրաքանչյուր ծառայության առանձին ծախսը:

- total funding required to cover the entire target group with services

	2019	2020
MSM	USD 126,864.1059	USD 182,263.4576
TG	USD 1,669.91057	USD 2,190.58088

8. The main results of the analysis (actual data):

- list of actually budget-funded services for the target group,

Ծառայությունների նվազագույն փաթեթ

- Հավասարը՝ հավասարին խորհրդատվություն՝ ՄԻԱԿ-ի ու ՁԻԱՀ-ի և առկա ծառայությունների վերաբերյալ;
- ՄԻԱԿ վարակի վերաբերյալ նախաթեստային խորհրդատվություն;
- Պահպանակների տրամադրում:

Ծառայությունների ընդլայնված փաթեթ

- ՄԻԱԿ վարակի վերաբերյալ նախա- և հետթեստային խորհրդատվություն;
- ՄԻԱԿ վարակի նկատմամբ հետազոտություն շահառուի ինքնաթեստավորման միջոցով;
- Լուբրիկանտների տրամադրում;
- Առավել ռիսկային վարքագիծ դրսևորողների համար ԻՀԱԿ-ում նախակոնտակտային կանխարգելման (PrEP) և հետկոնտակտային կանխարգելման (PEP) ստացման հնարավորության մասին տեղեկատվության տրամադրում;
- Սեռավարակների նկատմամբ հետազոտություն և բուժում;
- Իրավաբանական անհատական խորհրդատվություն:

- the size of the target group covered by budget funds,

	2019	2020
MSM	3946	5515

TG	62	80

- the cost of each service,

Ուսումնասիրվել է ընդհանուր բյուջեն՝ առանց բաշխումների, քանի որ ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից տրամադրված բյուջեն չի արտացոլել յուրաքանչյուր ծառայության առանձին ծախսը:

- total budget expenditures for the target group.

	2019	2020
MSM	USD 98,842.35	USD 189,711.07
TG	USD 1,215.38	USD 1,879.89

9. Identified funding gaps:

- services not covered by the budget,

ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցված նվազագույն և ընդլայնված փաթեթներից չեն ֆինանսավորվում հետևյալ կետերը՝

- Կրթատեղեկատվական կյուբերի տրամադրում (SUS և տրանս* անձանց համար);
- Ներգատաբանի խորհրդատվություն (Տրանս* անձանց համար):

Պետք է հաշվի առնել, սակայն, այն հանգամանքը, որ այդ փաթեթներում ներառված են միայն հիմնական ծառայությունները: Այսպես՝ 2018 թվականին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և Առողջության, իրավունքի, գենդերային և սեռական բազմազանության եվրասիական կոալիցիայի ֆինանսավորմամբ իրականացվել է SUS և տրանս* անձանց համար նախատեսված ծառայությունների և դրանց միջազգային չափանիշներին համապատասխանության ուսումնասիրություն SUS և տրանս* անձանց շրջանում ՄԻԱՎ-ի և ՍՃՓՎ-ի մասով համակարգային ծառայություններ իրականացնող գործիքի (MSMIT և TRANSIT) հիման վրա: Մի շարք ծառայություններ, որոնք ընդգրկված են ուսումնասիրության արդյունքում ձևավորված նվազագույն և ընդլայնված փաթեթներում, ֆինանսավորում չեն ստանում:

- Կրթատեղեկատվական թրեյնինգներ համայնքների ներկայացուցիչների համար
- Հոգեբանական խորհրդատվություն
- Բազմատեսակ լուրբիկանտներ (սիլիկոնային հիմքով)
- Մորայլ հավելվածներ

Բացի նվազագույն և ընդլայնված փաթեթներից՝ մշակվել է նաև ծառայությունների հավելյալ փաթեթը:

MSMIT գործիքի հիման վրա հետազոտություն Հայաստանում իրականացվելու է նաև 2021 թվականին:

- overestimated or underestimated size of the target group,

2019 կտրվածքով ծածկույթը պակաս է եղել 54 մարդով, մոտ 1,5%, իսկ 2020-ի կտրվածքով ծածկույթը գերազանցվել է 15 մարդով, 0,2%, իսկ SQ խմբի առումով, նախատեսված և փաստացի ծածկույթը նույնն է:

- overestimated or underestimated cost of each service,

Չվերաբերելի

- assessment of the lack of funding for each service and general calculations.

Ֆինանսավորման բացերը լրացնելու համար անհրաժեշտ է հետևել ստորև թվարկված առաջարկությունների կատարմանը:

10. Recommendations for filling gaps in public funding based on the advocacy plan developed by the grantee:

SUS և տրանս* անձանց տրամադրվող սոցիալական և առողջապահական ծառայությունների համար Հայաստանի ազգային բյուջեի ֆինանսական բացերի վերլուծության ընթացքում առանձնացվել են հետևյալ առաջարկությունները:

1. Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը ավարտվում է 2021թ.-ին: Միջոցառումների շարունակականությունը ապահովելու համար անհրաժեշտ է մշակվի և հաստատվի նոր Ազգային ծրագիրը հաջորդ տարիների համար:

Միջոցառումների ժամանակացույց: Անհրաժեշտ է ճշտել ՄՀՀ քարտուղարության հետ:

Ակնկալվող արդյունք: Հայաստանի Հանրապետությունում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մշակման և հաստատման գործընթացում խոցելի խմբերի ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածություն:

2. Գործող ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով պետական ֆինանսավորում կանխարգելման ծրագրերի իրականացման համար նախատեսված չի եղել, դրանք հիմնականում իրականացվել են Գլոբալ հիմնադրամի և այլ միջազգային դոնորների միջոցներով: Անհրաժեշտ է դիտարկել կանխարգելման ծրագրերի ֆինանսական հետագա ապահովումը՝ հաշվի առնելով, որ Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորումն ավարտվում է 2021թ.-ին, ինչպես նաև կարևոր է հաշվի առնել երկրի տնտեսական վիճակը, ֆինանսական հնարավորությունները:

Միջոցառումների ժամանակացույց: Քանի որ նոր ՄՀՀ կազմը հաստատվում է 2 տարով, ադվոկացիոն քայլերն անհրաժեշտ է իրականացնել առաջիկա երկու տարում:

Ակնկալվող արդյունք: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի պետական ֆինանսական միջոցների մասնակի ապահովում:

3. Խոցելի խմբերի ներկայացուցիչները կանխարգելման ծառայություններ ստանում են հասարակական կազմակերպություններում: Տրամադրվող ծառայությունների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և դիտարկել առաջնային օղակի միջոցով կանխարգելման ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերի ներկայացուցիչներին:

Ժամանակացույց: Քանի որ նոր ՄՀՀ կազմը հաստատվում է 2 տարով, ադվոկացիոն քայլերն անհրաժեշտ է իրականացնել առաջիկա երկու տարում:

Ակնկալվող արդյունք: ՄՀՀ կից համայնքահեն մոնիտորինգային խմբերի ձևավորում: Խմբի հաշվետվությունների հիման վրա առաջարկների մշակում՝ ուղղված խոցելի խմբերի ներկայացուցիչների համար որակյալ և կարիքներին համապատասխան ծառայությունների տրամադրման ապահովմանը:

4. Սոցիալական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերին, չեն իրականացվում: Դա պայմանավորված չէ օրենսդրական խոչընդոտներով, այլև առաջարկի բացակայությամբ: Այս առումով խորհուրդ է տրվում ուսումնասիրել խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կարիքները և հասանելիությունը, և արդյունքում մշակել առաջարկներ, ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կարիքներին:

Ժամանակացույցը: Ընթացիկ:

Ակնկալվող արդյունք: Սոցիալական ծրագրերի կարիքների գնահատում: Նոր ծրագրային առաջարկների մշակում և ներկայացում:

11. How the activities on this short-term analysis fit into the overall budget advocacy process in the country (what previous work, possibly done by other organizations / experts, you relied on, with whom and how you plan to cooperate in the future):

Ամբողջ վերլուծությունը հիմնված է 2019թ-ին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից արված արդյունքների վերլուծության հիման վրա: 2020թ-ի համար տվյալները դեռևս ստացված չէին: Տվյալ վերլուծության ընթացքում արված առաջարկությունները, ինչպես նաև մշակված ճանապարհային քարտեզը հնարավորություն կտան շահագրգիռ

կազմակերպություններին, այդ թվում ՀԿ-ներին, ձեռնարկել քայլեր բյուջետային ադվոկացիայի ուղղությամբ:

This publication was developed by New Generation Humanitarian NGO within a grant from the Eurasian Harm Reduction Association (EHRA) under the Eurasian Regional Consortium project funded by the Robert Carr Fund for civil society networks (RCF).